

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ՎԿ-ՄԱ-ԾՁԲ-2022/12**

ք. Երևան

« 28 » « 03 » 2022թ.

Վիճակագրական կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Գարանտսերվիս>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Հակոբյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնացուցակի պահանջներին:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Յանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնացուցակին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնացուցակին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 4):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 960000 (ինը հարյուր վաթսու հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների գնման դեպքում մատուցված ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝

ՎԳ=ՄԳ/ՆԳxԾԷԲ, որտեղ՝

1) ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է:

2) ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է:

3) ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է:

4) Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է:

5) Բ-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնացուցակին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել

ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայության մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 21 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 N 4 և N 4.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՅԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վիճակագրական կոմիտե

Կառավարական տուն 3

ՀՎՀՀ 02507509

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն


Հ/Հ Ա.900011011013, Բ.900011011021,

Գ. 900011011054

Գլխավոր քարտուղար

Ա. Հայրապետյան

Կ.Տ.



(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

<<Գարանտսերվիս>> ՍՊԸ

ք. Երևան, Թբիլիսյան 20

ՀՎՀՀ 00840437

Կոնվերսբանկ ՓԲԸ

Հ/Հ 193004674290

Տնօրեն

Վ. Հակոբյան

Կ.Տ.



(ստորագրություն)

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆԱՏՈՒՑԱԿ

[illegible]

6	Վառելիքի գտիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	5000	5000	5000	5000	5000	5000	5000
7	Բենզամիջի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	9000	9000	9000	9000	9000	9000	50000
8	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	9000	9000	9000	9000	9000	12000	12000
9	Ակսելերատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	2000	2000	2000	2000	2000	2000	2000
10	Ակսելերատորի մաքրում	հատ	5000	5000	5000	5000	5000	5000	5000
	3. Սառեցման և արտաձման համակարգ								
11	Փոկի հանում և տեղադրում	հատ	4000	5000	5000	5000	5000	5000	5000
12	Հովիարի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	8000	8000	8000	8000	8000	8000	8000
13	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	10000	8000	8000	8000	8000	10000	15000
14	Ռադիատորի վերանորոգում	հատ	45000	45000	45000	45000	45000	45000	45000
15	Վառարանի ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	50000	50000	50000	50000	50000	50000	50000
16	Թերմոստատի փոխարինում	հատ	8000	8000	8000	8000	8000	8000	8000
17	Ընդարձակող բաքի փոխարինում	հատ	3000	3000	3000	3000	3000	3000	3000
18	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	5000	5000	5000	5000	5000	5000	5000
19	Հովացման համակարգի փողրակի հանում և տեղադրում	հատ	4000	4000	4000	4000	4000	5000	5000
20	Հովացման հեղուկի փոխարինում	հատ	3000	3000	3000	3000	3000	3000	3000
21	ԱՓՏ-ի յուղի և գտիչի փոխարինում	հատ	12000	12000	12000	12000	12000	12000	

[illegible]

36	Ձախ կամ այց հորակապի փոշեթիկնոցի փոխարինում	հատ	8000	8000	8000	8000	8000	8000
37	Ծայրականների հանում և տեղադրում	հատ	5000	5000	5000	5000	5000	5000
38	Առջևի կայունարարի վրանների փոխարինում	լրակազմ	5000	5000	5000	5000	5000	5000
39	Հետևի կայունարարի վրանների փոխարինում	լրակազմ	5000	5000	5000	5000	5000	5000
40	Հետևի զսպանակի փոխարինում	հատ	5000	5000	5000	5000	5000	5000
41	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	6000	6000	6000	6000	6000	6000
42	Առջևի կամ հետևի մետաղածողի (շտանգա) հանում և տեղադրում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000
43	Առջևի կամ հետևի մետաղածողի (շտանգա) վրանի փոխարինում	հատ	2500	2500	2500	2500	2500	2500
44	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	հատ	3000	3000	3000	3000	3000	3000
45	Փոխանցման սուուկի հանում և տեղադրում	հատ	60000	60000	60000	60000	60000	60000
46	Կցորդման տանող և տարվող սկավառակների փոխարինում	հատ				30000		60000
47	Անվաբացքի կարգավորում	հատ	6000	6000	6000	6000	6000	8000
	5. Ղեկային մեխանիզմ							
48	Ղեկային կալունի հանում և տեղադրում	հատ	25000	25000	25000	25000	25000	25000
49	Ղեկային կալունի վերանորոգում	հատ	55000	55000	55000	55000	55000	55000
50	Ղեկային ծողի հանում և տեղադրում	հատ	20000	20000	20000	20000	20000	20000

80	Վառոցքի կոճի փոխարինում	հատ	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000
81	Վառոցքի մուների փոխարինում	հատ	3000	3000	3000	3000	3000	3000	3000	10000
82	Ապակեվազիչի պոմպի փոխարինում	հատ	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000
83	Ապակեվազիչի փոխարինում	հատ	-	-	-	-	-	-	-	-
84	Կոնդիցիոների լիցքավորում	հատ	18000	18000	18000	18000	18000	18000	18000	18000
85	Ապահովիչի փոխարինում	հատ	500	500	500	500	500	500	500	500
8. Այլ ծառայություններ										
86	Անիվի հանում և տեղադրում	հատ	500	500	500	500	500	500	500	500
87	Անվարդի քանդում և հավաքում	հատ	500	500	500	500	500	500	500	1000
88	Անիվի հավասարակշռում	հատ	1000	1000	1000	1000	1000	1000	1000	1000
89	CO-զոդման աշխատանքներ	սմ	1000	1000	1000	1000	1000	1000	1000	1000
90	հառատային աշխատանքներ	կտոր	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000
91	Փակվանագրոծի աշխատանքներ	ժամ	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000
92	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 կտորի համար	հատ	50000	50000	50000	50000	50000	50000	50000	50000
Պահեստամասերի, քայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները										
1. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ										
1	Ցուղ շարժիչի սինթետիկ 5W40	լիտր	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000
2	Ցուղ շարժիչի սինթետիկ 5w30	լիտր	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000
3	Ցուղի գտիչ	հատ	6500	4500	4500	4500	4500	4500	4500	6500
4	Ցուղի փողոցակ	հատ	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000
5	Վառելանյութի մղիչ էլեկտրական	հատ	140000	120000	120000	120000	120000	120000	140000	140000
6	Վառելանյութի փողոցակ	հատ	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000
7	Օդի գտիչ	հատ	12000	10000	10000	10000	6500	11000	15000	15000

[illegible]

[illegible]


86	Վառողքի կոճ	հատ	35000	30000	30000	30000	20000	30000	30000
87	Վառողքի մոմ	հատ	7000	6500	6500	6500	3500	6500	16000
88	Ապակեվազիչ	հատ	12000	12000	12000	12000	12000	12000	12000
89	Ապակեվազիչի պոմպ	հատ	20000	20000	20000	20000	20000	20000	20000
90	Ապակեվազիչի հեղուկի տարրա	հատ	30000	30000	30000	30000	30000	30000	30000
91	Ապահովիչ	հատ	1000	1000	1000	1000	1000	1000	1000
92	Ապակեմաքրիչի շարժիչ	հատ	35000	35000	35000	35000	35000	35000	35000

ՊԱՏՎՈՐԱՏՈՒ

Վիճակագրական կոմիտե
Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507509

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ Ա.900011011013, Բ.900011011021,
Գ.900011011054

Գլխավոր քարտուղար
Ա. Հայրապետյան



Կ.Տ.

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

<<Գարանտսերվիս>> ՍՊԸ
ք. Երևան, Թբիլիսյան 20
ՀՎՀՀ 00840437

Կոնսերպանկ ՓԲԸ
Հ/Հ 193004674290

Տնօրեն

Վ. Հակոբյան

(ստորագրություն)



ԳՆԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հազ. դրամ

Ծառայության													
N	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Հախման միավորը	I եռ.		II եռ.		III եռ.		IV եռ. /մինչև դեկտեմբերի 19-ը/		Ընդամենը	
				միություն	/բոլոր >> բոլոր/ միություն	միություն	/բոլոր >> բոլոր/ միություն	միություն	/բոլոր >> բոլոր/ միություն	միություն	/բոլոր >> բոլոր/ միություն		
Ա. «Վիճակագրության քաղաքականության մշակում և իրականացում, պաշտոնական վիճակագրական տեղեկատվության մշակում, արտադրում և տարածում» միջոցառում /01.03.02.1143.11001/													
1	50111130/1	Տոյոտա Քամրի պ/հ 032LL55 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն	դրամ	1	18.0	1	63.0	1	108.0	1	180.0	1	180.0
2	50111130/2	Հյունդայի Սոնատա պ/հ 150SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն	դրամ	1	14.0	1	49.0	1	84.0	1	140.0	1	140.0
3	50111130/3	Հյունդայի Էլանտրա պ/հ 122SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն	դրամ	1	14.0	1	49.0	1	84.0	1	140.0	1	140.0
Բ. «Վիճակագրության տեղեկատվության հավաքում» միջոցառում /01.03.02.1143.11002/													
4	50111130/1	Հյունդայի Էլանտրա պ/հ 120SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն	դրամ	1	40.5	1	56.25	1	87.5	1	125.0	1	125.0
5	50111130/2	Ռենո Սանդերո պ/հ 121SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն	դրամ	1	40.5	1	56.25	1	87.5	1	125.0	1	125.0

Գ. Զեղթական մարդահամարի նախապատրաստման և անցկացման միջոցառումների իրականացում / Միջոցառում / 01.03.02.1143.11003/

6	50111130/1	Կիա Օպտիմա մակնիշի պ/հ 130SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն	դրամ	1	31.0	1	43.75	1	75.0	1	125.0	1	125.0
7	50111130/2	Նիսսան Ուրվան մակնիշի պ/հ 123SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն	դրամ			1	43.75	1	75.0	1	125.0	1	125.0

* գնման ժամանակացույցը ներկայացված է աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՐ

Վիճակագրական կոմիտե
Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507509
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ Ա.900011011013, Բ.900011011021,
Գ. 900011011054
Գլխավոր քարտուղար
Ա. Հայրապետյան (ստորագրություն)



ԿԱՏԱՐՈՂ

<<Գարանտսերվիս>> ՍՊԸ
ք. Երևան, Թբիլիսյան 20
ՀՎՀՀ 00840437
Կոնվերտացիոն ՓԲԸ
Հ/Հ 193004674290
Տնօրեն
Վ. Հակոբյան (ստորագրություն)



ԿՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*


Ծառայության															Հազ. դրամ
N	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			մոխիմտզփի	տմոյր	նվսմոո	ոկմոյր	ոկդուսկ	ոկմուսկ	ոստոոսո	մզմրդտոհոդր	մզմրդտհիսկ	մզմրդնոլ	մզմրդտհզն	Ընդամենը	
Ա. «Վիճակագրության քաղաքականության մշակում և իրականացում, պաշտոնական վիճակագրական տեղեկատվության մշակում, արտադրում և տարածում» միջոցառում /01.03.02.1143.11001/															
1	50111130/1	Տոյոտա Քամրի պ/հ 032L55 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն		18.0	63.0	63.0	63.0	108.0	108.0	108.0	180.0	180.0	180.0	180.0	
2	50111130/2	Հյունդայի Սոնատա պ/հ 150SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն		14.0	49.0	49.0	49.0	84.0	84.0	84.0	140.0	140.0	140.0	140.0	
3	50111130/3	Հյունդայի Էլանտրա պ/հ 122SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն		14.0	49.0	49.0	49.0	84.0	84.0	84.0	140.0	140.0	140.0	140.0	
Բ. «Վիճակագրության տեղեկատվության հավաքում» միջոցառում /01.03.02.1143.11002/															
4	50111130/1	Հյունդայի Էլանտրա պ/հ 120SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն		40.5	56.25	56.25	56.25	87.5	87.5	87.5	125.0	125.0	125.0	125.0	
5	50111130/2	Ռենո Սանդերո պ/հ 121SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն		40.5	56.25	56.25	56.25	87.5	87.5	87.5	125.0	125.0	125.0	125.0	

Գ. «Հերթական մարդահամարի նախապատրաստման և անցկացման միջոցառումների իրականացում» /01.03.02.1143.11003/												
6	50111130/1	Կիա Օպտիմա մակնիշի պ/հ 130SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն			31.0	43.75	43.75	43.75	43.75	75.0	75.0	125.0
7	50111130/2	Նիսսան Ուրվան մակնիշի պ/հ 123SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն				43.75	43.75	43.75	43.75	75.0	75.0	125.0

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են անողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վիճակագրական կոմիտե
Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507509
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ Ա.900011011013, Բ.900011011021,
Գ. 900011011054
Գլխավոր քարտուղար
Ա. Հայրապետյան



(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

<<Գարանտերվա>> ՍՊԸ
ք. Երևան, Թբիլիսյան 20
ՀՎՀՀ 00840437
Կոնվերսանկ ՓԲԸ
Հ/Հ 193004674290
Տնօրեն՝



Վ. Հակոբյան
(ստորագրություն)

Պայմանագրի կողմ՝

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Մատուցված ծառայությունների						
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 4.1
« 28 » « 03 » 2022թ. կնքված N ՀՀ ՎԿ-ՄԱ-ԾՁԲ-2022/12
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
գնման պայմանագրի կնքման ամսաթիվը _____ պայմանագրի համարը
20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն